ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՀԵՆՐԻԿԻ

ՉԱՐ ՈԳԻՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ. ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ

**Ժ. 01.05 «Բանահյուսություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Թամար Լազարի Հայրապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Արմեն Շավարշի Սարգսյան
բանասիրական գիտությունների թեկնածու
Տորք Սամվելի Դալալյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի փող., 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. նոյեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝ **Ս.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն աշխատանքը նվիրված է հայ ժողովրդական զրույցներում առկա ստորին առասպելաբանական կերպարների ուսումնասիրությանը, դրանց խմբավորման և դասակարգման խնդիրներին: Հետազոտության առարկան միայն չար ոգիների մասին հայկական զրույցներն են, քանի որ վերջիններիս առնչվող նյութը բավական ծավալուն է և երկու հիմնական (չար և բարի) խմբերի բաժանվող ոգիներին հնարավոր չէ քննել միևնույն աշխատանքի սահմաններում:

Ատենախոսության մեջ ստորին առասպելաբանական կերպարները դիտարկվում են համաժամանակյա (synchronous, синхронный) մոտեցմամբ՝ հիմնվելով XIX դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը գրառված բանահյուսական և ազգագրական նյութերի վրա: Կերպարների ծագումնաբանական, անունների ստուգաբանության և այլ հարցերի դեպքում երբեմն անդրադարձ է կատարվել նաև պատմական աղբյուրներին՝ տարժամանակյա (asynchronous, асинхронный) մոտեցմամբ, ինչը հպանցիկ բնույթ է կրում և հիմնական խնդրի մեջ չի մտնում:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության շրջանակներում դիտարկվում են մի քանի կարևոր հիմնահարցեր, որոնց լուծումները նոր ուղիներ կբացեն հետագա ուսումնասիրողների համար: Առաջնային հարցերից մեկը գիտական տերմինաբանության խնդրի լուծումն է: Առաջնորդվելով ռուսական և եվրոպական բանագիտական դպրոցների սկզբունքներով՝ առաջին անգամ հայ բանագիտության մեջ համակարգված կերպով գիտական ակտիվ շրջանառության մեջ է դրվում «**ստորին առասպելաբանություն**» եզրույթը (մինչ այս՝ ուսումնասիրվող թեման դիտարկվել ու քննվել է որպես «սնահավատական զրույց»):

Աշխատանքի մեջ նորովի մոտեցում է ցուցաբերվում ստորին առասպելաբանական կերպարների մասին տեղեկություններ հաղորդող աղբյուրների շրջանակի վերաբերյալ: Սնահավատական զրույցներից, ավանդազրույցներից, հեքիաթներից և հավատալիքներից բացի՝ որպես սկզբնաղբյուր առատորեն օգտագործվել են բանահյուսության այնպիսի ժանրերի առանձին միավորներ, ինչպիսիք են ժողովրդական աղոթքները, հանելուկները, անեծքները, առածներն ու ասացվածքները, նաև դարձվածային արտահայտություններ, բանաձևային նմուշներ և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ատենախոսության նպատակը հայկական զրույցներում առկա ստորին առասպելաբանական կերպարների խմբավորումն ու դասակարգումն է՝ ըստ տիպերի և գործառույթների: Մեր առջև դրված նպատակի իրագործման համար անհրաժեշտ էր լուծել հետևյալ խնդիրները.

ա) հավաքել, մեկտեղել ստորին առասպելաբանական կերպարների մասին ժողովրդական զրույցները գրավոր և բանավոր աղբյուրներից,

բ) խմբավորել ոգիների անունների հայտնի և բարբառային տարբերակները նույնականացման սկզբունքով,

գ) բնութագրել և որոշել ստորին առասպելաբանական կերպարների տեղը հայկական դիվարանում (պանդեմոնիում),

դ) կատարել ստուգաբանական աշխատանք՝ ոգիների անունների ծագման ու առաջացման հարցերը պարզելու նպատակով,

ե) որոշել ոգիների և դրանց հետ կապված հավատալիքների տարածվածությունն ու աշխարհագրական ընդգրկումը,

զ) ուսումնասիրել հայկական զրույցներում առկա ստորին առասպելաբանական կերպարները ժողովրդի ծիսական և կենցաղային կյանքի համատեքստում,

է) համեմատել չար ոգիների գործառույթներն այլ ժողովուրդների զրույցներում ու հավատալիքներում առկա ստորին առասպելաբանական կերպարների հետ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության առարկա հանդիսացող ստորին առասպելաբանական կերպարների քննությունը կատարվում է իր ծագման և զարգացման ամբողջության մեջ՝ դրսևորելով պատմական մոտեցում՝ **պատմաճանաչողական** և **պատմահամեմատական** սկզբունքներով: Աշխատանքի ընդհանուր մեթոդաբանական հիմքը **էմպիրիկ** հետազոտության մեթոդն է, որը կատարվել է դիտման, նյութի գրանցման, համեմատության, բանահյուսական և ազգագրական նյութի համադրման և ուսումնասիրման եղանակներով: Ազգագրական առանձին շրջաններին բնորոշ տեղական պատկերացումներն ու հավատալիքային դրսևորումները ընդհանուրի համատեքստում կատարվել են **ինդուկտիվ** մեթոդով: Աշխատանքի կատարման ընթացքում կիրառվել են նաև **տիպաբանական** և **ֆենոմենոլոգիական** մեթոդները:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ստորին առասպելաբանության և վերջինիս կերպարների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունեն հայագիտության և ժողովրդագիտության համար: Աշխատանքի գիտագործնական նշանակությունն այն է, որ կարող է արժեքավոր աղբյուր հանդիսանալ ստորին առասպելաբանական կերպարներին վերաբերող տեքստերի, օգտագործված բանահյուսական և ազգագրական հարուստ նյութի առումով: Աշխատանքը կարող է նպաստել բանագետների, ազգագրագետների, լեզվաբանների, բարբառագետների, ժողովրդական բժշկությամբ և հավատալիքներով զբաղվողների, ինչպես նաև գիտության այլ ոլորտներով հետաքրքրվող հետազոտողների հետագա ուսումնասիրությունների համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: **Առաջին** («Չար ոգիների մասին ժողովրդական զրույցների ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները»), **երկրորդ** («Դևն ու դիվականը հայ ժողովրդական բանահյուսության մեջ»), **երրորդ** («Ծննդկանին ու նորածնին վնասով և մարդու բազմացմանը խոչընդոտող ոգիներ») և **չորրորդ** («Տոմարի հետ կապված ոգիներ») գլուխները բաղկացած են երեքական, իսկ **հինգերորդ** («Ջրի ոգիներ և ուրվականներ») գլուխը՝ երկու ենթագլուխներից: Եզրակացություններում տրված են աշխատանքում արծարծված թեմաների եզրահանգումները:

Հավելվածն ընդգրկում է դաշտային աշխատանքների ընթացքում հեղինակի գրառած զրույցները ստորին առասպելաբանական կերպարների մասին, բանահյուսական տարբեր ժանրերի պատկանող տեքստեր, լուսանկարների, քարտեզների ցանկեր: Ներկայացվում են նաև չար ոգիների անունների բառարան՝ բարբառային տարբերակներով, ոգիների հիմնական գործառույթների և արտաքին տեսքի նկարագրություններով, ինչպես նաև հատուկ անուններ ունեցող ոգիների և չար ոգիների հարուցած հիվանդությունների ցանկեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրվում է ատենախոսության ընդհանուր բնութագիրը: Համակողմանիորեն ներկայացվում են թեմայի ուսումնասիրման պատմությունը և աղբյուրագիտական հիմքերը՝ օգտագործված գրականության ամփոփ պատկերով: Ներկայացվում են հետազոտության մեթոդաբանությունը, աշխատանքի նպատակի, խնդիրների, թեմայի արդիականության, գիտական նորույթի, գիտական ու գործնական նշանակության, կառուցվածքի, ստորին առասպելաբանության միջգիտակարգայնությանն առնչվող խնդիրներ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՉԱՐ ՈԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. ԶՐՈՒՅՑԻ ԺԱՆՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

XIX դարի կեսերից մինչև XX դարի 80-ականները (խորհրդային շրջանն ամբողջությամբ), ստորին առասպելաբանությունը քննվել և դիտարկվել է որպես սնահավատություն, իսկ հայկական դիվարանի բոլոր կերպարների մասին պատմությունները՝ սնահավատական զրույցներ: Քսաներորդ դարավերջից սկսած՝ ռուսական բանագիտական դպրոցի ականավոր ներկայացուցիչներ Լ. Վինոգրադովան, Ե. Լևկիևսկայան, Ս. Տոլստայան, Ա. Բարկովան և այլք գալիս են այն համոզման, որ չար ու բարի ոգիների մասին հավատալիքները ոչ թե մարդու սնահավատական պատկերացումների արգասիք են, այլ հնագույն վիպական ավանդություն՝ սկզբնավորված առասպելներով ու առասպելաբանական զրույցներով:

Այդ համոզմունքը ռուս հետազոտողների կողմից, ովքեր ուսումնասիրում են կոնկրետ էթնիկ խմբերի՝ սլավոնական գրեթե բոլոր ժողովուրդների (ռուսներ, ուկրաինացիներ, լեհեր, բուլղարներ, սերբեր և այլն) բանավոր ավանդույթները, ամրագրվեցին բանագիտական, ազգագրական բազմաթիվ աշխատություններով և ուսումնասիրություններով: Նվազագույնի հասցնելով «սնահավատություն» եզրույթի կիրառությունը՝ ռուս բանագետներն արդեն մեր օրերում հաջորդաբար հրատարակում են իրենց աշխատությունները՝ «Ժողովրդական դիվաբանություն» կամ «Ստորին առասպելաբանություն» խորագրերի ներքո: Նշենք նաև, որ ռուս բանագիտության մեջ ստորին առասպելաբանական կերպարների մասին զրույցներն ունեն իրենց հստակ եզրույթները՝ «быличка» (суеверные мемораты) և «бывальщина» (суеверные фабулаты): Մինչդեռ հայ բանագիտության մեջ դրանք հանդես են գալիս «սնահավատական զրույցներ» (суеверные рассказы) մեկ ընդհանուր անվան տակ:

Խորհրդային տարիներին հայ բանագիտության մեջ շրջանառվող այս եզրույթը դիտարկվել է որպես ժանրի անվանում: «Սնահավատական զրույցներ» ասելով՝ հասկացել են չար ու բարի ոգիների մասին կարճառոտ պատմություններ: Սնահավատական զրույցների հիմքն ու հիմնական բովանդակությունն են կազմում ժողովրդական հավատալիքներն ու ստորին առասպելաբանական կերպարների մասին պատկերացումները: Ժանրին առնչվող զրույցների ակունքները կապված են դիվաբանական կերպարների առաջացման հետ, որոնց մասին պատկերացումները ծագել են հեռավոր անցյալում՝ չար ու բարի ոգիների մասին նախնական հավատալիքների հիմքի վրա:

1.2. ԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի մոտ, ստորին առասպելաբանական կերպարների ուսումնասիրությամբ զբաղվող կամ թեմայով հետաքրքրված հետազոտողների համար գիտական տերմինաբանության խնդիրը մնում է չլուծված: Բանագիտության, ազգագրության, աստվածաբանության, բժշկագիտության մեջ, ինչպես նաև մի շարք այլ գիտակարգերում օգտագործվում են ավանդաբար ընդունված սահմանումներ ու եզրույթներ, որոնք ամբողջությամբ չեն արտահայտում ո՛չ ուսումնասիրվող թեմայի բովանդակությունը և ո՛չ էլ ստորին առասպելաբանական կերպարներին հատուկ գործառույթների ու առանձնահատկությունների ողջ համակարգը: Վերոնշյալ գիտություններում ուսումնասիրության ոլորտը բնորոշելու համար աշխարհում ակտիվորեն օգտագործվում են պանդեմոնիում (pandemonium, пандемониум), ստորին առասպելաբանություն (lower mythology, низшая мифология), դիվաբանություն (demonology, демонология), ժողովրդական դիվաբանություն (folk demonology, народная демонология), սնահավատական զրույցներ (superstitious stories, суеверные рассказы) և այլն:

Ուսումնասիրության առարկա հանդիսացող կերպարների համար օգտագործվում են չար և բարի ոգիներ (evil and good spirits, злые и добрые духи), անմաքուր ուժեր (evil spirits, нечистые силы), առասպելաբանական կամ դիցաբանական կերպարներ (mythological characters, мифологические персонажи), ստորին

առասպելաբանական կերպարներ (characters of lower mythology, персонажи низшей мифологии), գերբնական արարածներ (supernatural beings, сверхъестественные существа), գերբնական ուժեր (supernatural forces, сверхъестественные силы), դևեր (demon, демон), դիվային արարածներ (demonic beings, демонические существа), չարքեր և այլ եզրույթներ:

Վերոնշյալ բոլոր եզրույթներն առանձին վերցրած՝ ինչ-որ չափով արտահայտում են քննվող թեմայի էությունը, սակայն, մեր կարծիքով, «ստորին առասպելաբանություն» եզրույթն ամենահարմարն է այս առումով: Իմաստաբանորեն այն իր մեջ է ներառում թե՛ ստորին առասպելաբանական կերպարների մասին պատմող զրույցներն ու պատմությունները, թե՛ վերջինների ներգործությունից զերծ մնալու և դրանցից ազատվելու միջոցների ու եղանակների քննությունը և այլն:

Հետազոտողների համար որոշակի դժվարություններ են առաջանում նաև ստորին առասպելաբանական կերպարների անունների և դրանց նույնականացման խնդրի շուրջ: Ակնհայտ է, որ այդ անունները կապված են խնդրո առարկա կերպարների տարբերակիչ հատկությունների հետ: Կերպարների անվանադրման համար կարևոր հանգամանք են ոգիների բնակության վայրերը (**ջրի** պառավ, **ջաղացի** սատանա, **սարի** փերի, **ձորի** քաջքեր և այլն), դրանց հայտնվելու ժամանակը (շվոտ (**փետրվար**), **գիշերվա** չարք) և այլ գործոններ: Սակայն միևնույն գործառույթն ունեցող առասպելաբանական կերպարը ազգագրական տարբեր շրջաններում կարող է ունենալ բոլորովին տարբեր անվանումներ (թպղա (Մուշ)–քեպե (Ակն), գոռնափշտիկ (Շիրակ)–խորթլաղ (Մալաթիա) և այլ): Պատահում է և հակառակը. բոլորովին տարբեր գործառույթներ ունեցող ոգիների տրվում է միևնույն անվանումը (խիպիլիկ, սատանա, շվոտ և այլն): Այս պարագայում ստորին առասպելաբանական կերպարների և վերջիններիս տարբեր անվանումների նույնականացումը կատարվում է՝ ըստ նրանց գործառույթների, ներգործության ոլորտի, գործունեության ժամանակահատվածի: Հաշվի են առնվում կերպարների արտաքինի նկարագրությունը, սեռը, տարիքը, զբաղմունքը, բնավորության և կենցաղի որոշակի ընդհանրություններ:

1.3. ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Ստորին առասպելաբանական կերպարները բանագետ-հետազոտողների կողմից նախ և առաջ բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ բարի ոգիներ և չար ոգիներ, այնուհետև դասակարգվում՝ ըստ ուսումնասիրողի հայեցողության: Այսինքն՝ յուրաքանչյուր հետազոտող խնդիրը լուծել է յուրովի: Հայ բանագիտության մեջ խնդրո առարկա հանդիսացող թեմայի՝ մեզ հայտնի հետազոտողների (Ղ. Ալիշան, Մ. Աբեղյան, Ա. Նազինյան, Ա. Ղազիյան) դասակարգումներից ոչ մեկը չի կարող բավարար համարվել: Ցայսօր մշակված չէ տեսականորեն հիմնավորված գիտական դասակարգման սխեմա, որի շրջանակներում հնարավոր կլիներ խմբավորել հայկական պանդեմոնիումի մեջ մտնող բոլոր կերպարներին՝ ըստ իրենց բնույթի, տեսակների և, ընդհանրապես, բոլոր բազմազանությունների:

Հայ հետազոտողներից առաջինը Ղևոնդ Ալիշանն էր, որ իր «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց» աշխատության մեջ դասակարգված ներկայացրեց հայկական պանդեմոնիումը: Սա առաջին և ամենահաջող փորձն էր այս առումով: Իր աշխատության մեջ հեղինակն ըստ «իրենց պես-պես անունների ու

տեսքի» ներկայացնում է ոգիների անունների բացատրությունն ու ծագումնաբանությունը, օրինակներ բերում հայ մատենագիրների գործերից, հայոց հավատքի համատեքստում տալիս վերջիններիի բնութագիրն ու գործառույթները:

Մ. Աբեղյանը երկրորդն էր, ով «Հայ ժողովրդական հավատքը» աշխատության մեջ անուղղակիորեն անդրադարձավ նաև ստորին առասպելաբանական կերպարների դասակարգման խնդրին: Ի տարբերություն Ղ. Ալիշանի՝ Մ. Աբեղյանը քննեց բարի ու չար ոգիներին ընդհանուր առասպելաբանության և հայոց հին հավատքի համատեքստում:

XX դարի վերջին քառորդին հայ բանագետներ Ա. Նազինյանն ու Ա. Ղազիյանը անդրադարձան ոչ թե ստորին առասպելաբանական կերպարներին առանձին-առանձին, այլ վերջիններիս դիտարկեցին ժողովրդական զրույցների շրջանակում:

Ատենախոսության մեջ ստորին առասպելաբանական կերպարների դասակարգումը կատարվել է հետևյալ սկզբունքով.

1. Ժողովրդական զրույցներից դուրս են բերվել չար ոգիների անունները՝ բարբառային բոլոր հնարավոր ձևերով ու տարբերակներով (ներառյալ հատուկ անունները, մակդիրները):

2. Կերպարները խմբավորվել են ըստ **բնութագրական** նկարագրության՝

ա) **արտաքին տեսքի նկարագրություն** (կապույտ, կանաչ աչքեր, գզգզված մազեր, ծուռ ոտքեր, կուզ, սուր եղունգներ, պղնձե ատամներ, մազոտ մարմին, պոչ, մեծ ականջներ, մերկություն, հագուստ, հասակ, չափսեր և այլն (կան նաև անկերպարանք ոգիներ),

բ) **սոցիալական կարգավիճակ** (սեռ, տարիք, ընտանեկան կարգավիճակ),

գ) **բնակության վայր** (սար, ձոր, քարայր, գետ, լիճ, ջրաղաց, տանիք, ավերակներ և այլն),

դ) **մարդկանց երևալու կամ անհետանալու ժամանակահատված** (գարուն, ամառ, աշուն, ձմեռ, գիշեր, ցերեկ, մայրամուտ, արևածագ և այլն),

ե) **կերպարների նախասիրություններ, զբաղմունք և սովորություններ** (արհեստով զբաղվել, երգել, պարել, հարսանիք անել, արտասվել, կերակուր պատրաստել, լվացք անել, տունը մաքրել, լողանալ, սանրվել և այլն),

զ) **կերպարներին ուղեկից գործիքների առկայություն** (սանր, գլխարկ, նիզակ, աղոթամրիչ (թզբեհ),

է) **քանակական առանձնահատկություններ** (մարդկանց երևում են միայնակ, զույգերով, ընտանյոք հանդերձ, խմբակային, ամբոխով և այլն):

3. Կերպարները խմբավորվել են ըստ **գործառութային** նկարագրության՝

ա) կենսական վնաս հասցնող, բ) հիվանդություն հարուցող, գ) պատժող:

4. Խմբավորվել են ըստ **ներգործության հասցեատիրոջ՝**

ա) հղի կին, բ) ծննդկան, գ) նորածին, դ) օրիորդներ, ե) երիտասարդ տղամարդիկ, զ) կենդանիներ, է) բույսեր:

Դասակարգման վերոնշյալ սկզբունքներն ու մոտեցումները մեզ հնարավորություն են տվել համակողմանիորեն ներկայացնել ստորին առասպելաբանական կերպարների բնութագրական և գործառութային հատկանիշները: Ոգիներին խմբավորելով ըստ գործառույթների՝ ակնհայտ է դառնում դրանցից մի քանիսի երկակիությունը՝ միևնույն ոգու թե՛ չար, թե՛ բարի բնույթն ու հատկանիշները (ջրի ոգիներ, խլվլիկ և այլն):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԴԵՎՆ ՈՒ ԴԻՎԱԿԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2.1. ԴԵՎԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Դևը ինչպես հայկական, այնպես էլ իրանական, արաբական, հնդկական և այլ ժողովուրդների առասպելաբանության մեջ բոլոր տեսակի չար ոգիներին ու գերբնական ուժերին տրվող ընդհանուր, պայմանական անուն է: Ժողովրդական պատկերացումների և Աստվածաշնչի վրա հիմնված ավանդության համաձայն՝ դևերը Աստծո ընկած հրեշտակի՝ սատանայի զորքն են: Հին հայկական ավանդության մեջ տարածված «դեվը» տարբեր լեզուներում հանդես է գալիս հետևյալ նույնարմատ ձևերով՝ պահլավերեն dēv, պարսկերեն՝ div, զենդերեն՝ daēva, քրդերեն՝ dev, զազաների լեզվով՝ dau, dewi, վրացերեն՝ devi, սերբերեն՝ divi, ալբաներեն՝ def, ասորերեն divā և այլն: Ղ. Ալիշանը վերոնշյալներին ավելացնում է նաև Demon, Diabolus, Diabble, գերմաներեն՝ Teufel, պարսկերեն՝ տիվ, Ավեստայի լեզվում՝ դաիվա և այլն:

Դևերի քանակի մասին գրավոր աղբյուրներում շատ տարբեր հիշատակություններ կան: Ստեփանոս Յազըճյանի հաղորդմամբ՝ «տէվաներն երեսուն երեք են թուով՝ զատ զատ անուններով ու յատկութեամբ»: Ըստ Գր. Տաթևացու՝ դևերի քանակը կազմում է բոլոր հրեշտակների շուրջ մեկ երրորդը, իսկ ըստ Աստվածաշնչի՝ հրեշտակների թիվը «բիւր բիւրաւոր եւ հազար հազարաւոր» է կամ «նրանց թիւը՝ ինչպէս ծովի աւազը»: Ուրբաթագրքում էլ խոսվում է վեց հարյուր դևերի մասին, որոնք հալածվելու են Արաւօթ, Սաբաւօթ, Սեդրակ, Միսաք, Եղկիոս, Սինայէլ, Ուրիէլ հրեշտակների անունները հիշելիս: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 6677 ձեռագրում, որը կրում է «Հարցմունք Սողոմոնի թագաւորին» խորագիրը, հիշատակվում են յոթանասուներկու դևերը, որոնք հարցման են ենթարկվում Սողոմոնի կողմից: Զրույցներում հանդիպող լեկեոն, լեգեհոն կամ լեգեովն անուններով դևը և՛ չար ոգի է, և՛ ոգիների խումբ:

Ըստ ժողովրդական զրույցների՝ դևերն ապրում են մարդկանցից հեռու՝ «Դևստանում»: Գրեթե ամենուր դևերի բնակարան համարվում են լեռներն ու սարերը, այրերն ու քարանձավները, մութ կիրճերը, խոր-խոր ձորերը, անջուր հորերն ու անջրդի անապատները, ձիթհաններն ու ջրաղացները: Դևերով բնակեցված վայրերը ժողովրդի կողմից ստացել են նաև դիվատուն, քաջքատուն, քաջանց տուն, քաջքասար, քաջքաձոր և այլ անվանումներ:

Դևի անվան հետ են կապվում ոչ միայն աշխարհագրական տեղանուններ, այլև որոշ շինություններ և քրիստոնեական սրբավայրեր: Ըստ զրույցների՝ հայկական որոշ վանքեր ու եկեղեցիներ ունեցել են իրենց ծառայող դևերը, որոնցից են Մշո Ս. Կարապետի վանքը, ս. Հարություն մատուռը, Սեբաստիայի ս. Գևորգ վանք (Դևոցա կամ Տեվքսե վանք), ս. Կոնոնոսի վանքը և այլն: Հայ ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերում (առասպել, հեքիաթ, ավանդազրույց, զրույց, վիպերգ, առած, ասացվածք, անեծք, կշտամբանք և այլն) արտա-

ցոլված դևն իր զուգահեռներն ունի հարևան և այլ ժողովուրդների կրոնաառասպելաբանական պատկերացումներում և հավատալիքներում:

Ժողովրդական զրույցների համատեքստում քննվող դևը նաև դեմոն է և օժտված է չար ոգիներին բնորոշ բոլոր հատկանիշներով: Չնայած բառի հնագույն ծագմանը՝ դևի մասին պատկերացումներն ու հավատալիքային դրսևորումները աղերսվում են նաև աստվածաշնչյան քրիստոնեական նյութին:

2.2. ԴԻՎԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԻՎԱՀԱԼԱԾՈՒԹՅՈՒՆ. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ

Դիվահարություն: Ժողովրդական զրույցներում և հավատալիքներում մարդուն պատուհասած գրեթե բոլոր ցավերն ու հիվանդությունները համարվում են դևերի ներգործման արդյունք: Դիվահարությունը դևերից «զարկված» լինելը, դևերի ազդեցությունը կրելն է: Հայերենում որպես այս երևույթի հոմանիշներ՝ օգտագործվում են շուրջ երկու տասնյակի հասնող բառեր ու արտահայտություններ՝ ընկնավորություն, այսահարություն, այսոտություն, դիվաբախություն, դիվոտություն, վերնոտություն, թեփոտություն, քաջքոտել, ջնոտել, թեփոտել, ժողովրդախոսակցական լեզվով նաև՝ դևերը գալ, քաջքերը գալ, դիվոտ, զարկուկ, հանդիպսի գալ, չարոց ընկնել, ցավաքյար լինել, չարոց քամի կպնել և այլն:

Դիվահարությունը՝ որպես հիվանդություն, առավելապես արտացոլված է հայ միջնադարյան ախտարական գրականության մեջ: Ըստ ձեռագրի՝ դևերի հարուցած հիվանդություններն ու դրանց ախտանիշներն են վախը, ամլությունը, չբերությունը, երեխայի դեղնությունը, դալկությունը, քթից ու բերանից արնահոսությունը, մարմնական և մկանային ցավերը, գլխացավը, շնչարգելությունը, շնչահեղձությունը, ուշաթափությունը, փորացավը, տկարությունը, անկարողությունը, պապանձվելը, խելագարությունը, աչքացավը, շլությունը, այրոցները, լեզվի ծանրանալը, թուլությունը, մազաթափությունը, մազոտվածությունը, ջրի մեջ մկանների բռնվելը, չափազանց նիհարությունը և այլն:

Հիվանդություններից բացի դևերին են վերագրվում նաև մարդկանց բախտի կապվելը, տան բարաքյաթի գնալը, ամուսինների կռիվներն ու անհաշտությունը, կնոջ դավաճանությունը, շատախոսությունը, մարդու հպարտությունը, որը, ըստ Աստվածաշնչի, մարդու մեղքերից գլխավորն է և այլն:

Դիվահալածություն: Դիվահարությունից խուսափելու և դիվահարին բուժելու համար ժողովրդական զրույցներում ու հավատալիքներում բազմաթիվ միջոցներ ու եղանակներ են առաջարկվում: Դևերից կարելի է պաշտպանվել չարահալած հատկանիշներով օժտված տարբեր բույսերի (բռինչ (բռշնի) ու մետաղների (երկաթ, պողպատ), հմայիլների, պահպանակների, թալիսմանների, աղոթքների միջոցով, դևերի անունը չտալով, երեխաներին պաշտպանելու դեպքում՝ վերմակի վրա փոքրիկի անունն ասեղնագործելով, սնարի մոտ՝ ճիպոտ, իսկ բարձի տակ՝ սուր, կտրող առարկաներ դնելով և այլն: Սակայն ամենազորեղ միջոցներն են խաչակնքվելը, աղոթքն ու Աստծո անունը տալը:

Դիվահարության բուժումը կամ դիվահալած ծեսը նախ եղել է քրմերի ու հեքիմների, իսկ քրիստոնեության շրջանում՝ հոգևորականների մենաշնորհը: Դի-

վահարին բուժելու համար նրանք պետք է օժտված լինեին հմայական հատուկ զորությամբ:

Միջնադարյան ձեռագրերում առկա նյութի և ժողովրդական զրույցների համաձայն՝ մարդու մեջ բույն դրած դևերը նախընտրում են անհայտ մնալ: Դիվահալածի համար կարևոր նախապայման է դևի անունն իմանալը, որպեսզի կարողանա վերջինիս հանել կամ վռնդել մարդու միջից:

Դիվահարին բժշկելու ամենատարածված և ժողովրդի կողմից առավել ընդունելի միջոցներից է ուխտագնացությունը: Հայաստանում դիվահալածության գործառույթ է վերագրվում Կոշի սուրբ Գևորգ, Արարատի մարզի ս. Կարապետ (Զնջուլու) եկեղեցիներին, Հարթագյուղի ս. Հովհաննես մատուռին և այլն:

2.3. ՍԱՏԱՆԱՅԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայկական դիվարանի ամենահայտնի կերպարներից մեկի՝ սատանայի մասին ժողովրդական զրույցներն ամենատարածվածն են և հանդիպում են Հայաստանի ազգագրական բոլոր շրջաններում: Կրոնաառասպելաբանական պատկերացումներում սատանան Աստծո և նրա բոլոր հետևորդների հակառակորդն է թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, դժոխքի տիրակալն է ու բոլոր անմաքուր ուժերի առաջնորդը: Ռուս բանագետ Է. Պոմերանցևայի բնութագրմամբ՝ «Սատանայի կերպարը հանդես է գալիս որպես չար ոգիների ընդհանրացված պատկերացում: Սա բանահյուսության ամենաբարդ կերպարներից մեկն է, միևնույն ժամանակ այն շատ հեշտությամբ է ձուլվում տարաբնույթ սյուժեների հետ, մտնում է տարբեր ժանրային համակարգեր և ենթարկվում տարբեր ժանրերի՝ լեգենդի, սնահավատական զրույցի և հեքիաթի օրենքներին»[1]:

«Սատանա» բառը ծագում է հին եբրայերեն satan բառից, որը նշանակում է ոսոխ, հակառակորդ, թշնամի, «հակառակ դիմակաց», չար ոգի, դև: Փոխառությամբ տարածված է մի շարք լեզուներում՝ ասորերեն՝ satana, ռուսերեն՝ сатана, արաբերեն՝ šaytan (շայթան), եթովպերեն՝ sadatan, հունարեն՝ Satanas, լատիներեն՝ satanas, հարավսլավերեն՝ sotona, գերմաներեն՝ satan և այլն:

Հայկական զրույցներում քննվող ոգին հիմնականում հանդես է գալիս «սատանա» ընդհանուր անվամբ: Հայոց ազգագրական որոշ շրջաններում (Նոր Նախիջևան, Շիրակ և այլն) սատանա-ոգուն անվանում են նաև մեզմե (ն) աղեկներ, մեզնից լավեր, քան զմեզ աղեկներ, աղեկանք, քաջք, փերի, ջիգարխան և այլն:

Հայկական զրույցներում սատանան պատկերացվում է երկսեռ, տարբեր ազգագրական շրջաններում արտաքինի գրեթե միևնույն նկարագրությամբ՝ մեկ կամ երկու կարճ եղջյուրներով, մանր ու կրակոտ աչքերով, դուրս ցցված քթով ու այտերով, բարակ ու կեռ պոչով, փոքր ձեռքերով: Սատանային վերագրվող մի հատկանիշ ընդհանուր է բոլոր ազգագրական շրջանների զրույցներում. նրա ոտքերն ու լեզուն թարս են: Ամեն ինչ անում է իրեն ասվածին, հրամայվածին հակառակ:

Աներևույթ դառնալու կամ լինելու կարողությունը և կերպարանափոխումը սատանաների ու բոլոր տեսակի չար ոգիների հիմնական և ամենագլխավոր

[1] **Померанцева Э.,** Мифологические персонажи в русском фольклоре, с. 148.

զենքերն են: Աներևույթ են դառնում բանադրանքի կամ անեծքի հետևանքով, որի հեղինակները սրբերն են, Աստված, Քրիստոսը, Աստվածածինը, Նոյ նահապետը և ուրիշներ:

Ժողովրդական զրույցներում սատանա բռնելու երեք հիմնական եղանակներ են ներկայացվում: **Առաջինը** ձիու վրա կուպր քսելու եղանակով սատանա բռնելու տարբերակն է, որն ընդհանրական է ազգագրական բոլոր շրջանների զրույցների համար: Ամենուր պատմում են, թե այսինչի գոմում ողջ գիշեր ձիերը վազելուց հոգնել են, քրտնել, և առավոտյան տերերը տեսել են իրենց ձիերի բաշերը հյուսած:

Երկրորդը սատանայի մազերը կտրելու եղանակով իրենց ենթարկելու տարբերակն է: Տիրանալով մազերին՝ մարդը լիարժեք իշխանություն է ունենում սատանայի վրա, քանի որ, ըստ հնագույն պատկերացումների, մազի մեջ է ամփոփված տիրոջ հոգին:

Երրորդը սատանային ասեղով (քորոց, մախաթ) բռնելու եղանակն է: Այս սյուժեով զրույցներն ամենատարածվածներից են: Սատանաներին բռնելուց և իրենց ենթարկելուց հետո՝ մարդիկ վերջիններիս պահում են իրենց տներում՝ որպես ծառա՝ գաղտնի պահելով նրանց ծագումը: Կին-սատանաները կատարում են տան բոլոր գործերը: Զրույցներում սատանաների ծառայության ժամանակահատվածը շատ տարբեր է, նշվում են 3, 5, 7, 9, 10, 11, 14 և այլ տարիներ:

Սատանայի գործառույթներից մեկը նրա անեծքն է՝ ուղղված իրեն բռնող, մի քանի տարի անվարձ աշխատեցնող մարդուն ու նրա ընտանիքին: Բանասացները հաստատում են, որ սատանաների անեծքները (դառը դատեք, դատարկ նստեք, տանդ հացը կամ ջուրը պակասեն, տանդ մոխիրը պակասի, ամբողջական բաժակ, գդալ, ափսե, կճուճ, շերեփ կամ դույլ չունենաք, աչքերդ բաց քնես, շերեփն ու չանախը դրսերը ման գան, ձեր ամաններ խոռ ըլլին) մինչև օրս էլ այդ ընտանիքների վրա են: Կարինի ազգագրական և բանահյուսական նյութերում հանդիպում ենք եզակի երևույթի, երբ սատանաներն օրհնում են գերությունից իրենց ազատողներին:

Սատանայի չարագործություններից զգուշանալու և պաշտպանվելու համար ժողովուրդը երկու հիմնական եղանակ է առաջարկում: **Առաջինը** մետաղյա (երկաթ, պողպատ) սուր, կտրող, ծակող իրեր ու գործիքների կիրառումն էր: Երկաթի միջոցով չար ուժերից պաշտպանվելու հավատալիքը կենցաղավարում էր ամենուր, Հայաստանի ազգագրական բոլոր շրջաններում:

Երկրորդը քրիստոնեական բարեպաշտական գործողություններին (աղոթք, խաչակնքում, Աստծո, Քրիստոսի, Աստվածածնի, սրբերի անունները տալ) հետևելն էր, որը ոչ միայն սատանաների կամ քաջքերի, այլև բոլոր չար ուժերի դեմ գործելու կամ դրանցից պաշտպանվելու ամենազորեղ միջոցներից էր: Ժողովրդի գիտակցության մեջ և կենցաղում խաչակնքումը հզոր վահան է չար ուժերի դեմ, որով մերժում են սատանային ու հաստատում են իրենց գոյությունը զուտ Աստծո կամ Քրիստոսի համար: Աստծո անունը տալով՝ դիմում են նրա օգնությանը, խնդրում ողորմածություն, փրկություն չարից:

Վերոնշյալ երկու հիմնական գործիքներից բացի՝ ժողովրդական զրույցներում սատանան վախենում կամ անհետանում է աքաղաղի կանչից, խոզի անունը լսելիս, կատու տեսնելիս, չախմախից, կայծակից ու գայլից և այլն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԾՆՆԴԿԱՆԻՆ ՈՒ ՆՈՐԱԾՆԻՆ ՎՆԱՍՈՂ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՈԳԻՆԵՐ

3.1. ԱԼԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Չար ոգիների մասին հայկական զրույցներից և ժողովրդական հավատալիքներից մեզ հայտնի է ոգիների մի տեսակ, որոնց գործողություններն ուղղված են ծննդկանի և նորածնի դեմ: Նրանց էին վերագրվում ծննդկանի մահը, նորածինների զանազան հիվանդությունները, մասնավորապես՝ հանկարծամահությունը: Ժողովրդի պատկերացմամբ՝ չարքերով ու դևերով էր լցված հատկապես հղի և ծննդաբերող կնոջ շրջապատը: Ոգիների այս խմբին են պատկանում ալերը, որոնք տարբեր ժողովուրդների հավատալիքներում հանդես են գալիս հետևյալ նույնարմատ անուններով՝ ալբաստի (տաջիկներ), ալ նաբ (լեզգիներ), ալի (վրացիներ), ալա ժեն (թալիշներ), հալ (ուդիներ), ալք (քրդեր), ալմազի (ինգուշներ, չեչեններ), ալմաս (մոնղոլական ժողովուրդներ), ալբաստ, ալվաստի (Կազանի, Ղրիմի թաթարներ, բաշկիրներ, ուզբեկներ) և այլն:

Ալի հավատալիքն ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է ոչ միայն Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջաններում, այլև քրիստոնյա և մահմեդական շատ ժողովուրդների հավատալիքներում (Իրան, Միջին Ասիա, Կովկաս, Ռուսաստան և այլն): Ամենուր նույնն են կամ չափազանց նման ոգու թե՛ արտաքին նկարագրությունն ու գործառույթները և թե՛ նրանից զգուշանալու կամ պաշտպանվելու ժողովրդական միջոցներն ու եղանակները:

Ալերի գոյությանը հավատում էին Ակնում, Արաբկիրում, Բաբերդում, Շիրակում, Երևանում, Խարբերդում, Ղարաբաղում, Կեսարիայում, Նոր Բայազետում, Բալուում, Շուլավերում, Քղիում, Ջավախքում, Սեբաստիայում և Մալաթիայի գրեթե բոլոր գավառներում: Ալերը հիմնականում իգական ոգիներ են՝ կես-կենդանական, կես-մարդկային, փրչոտ և թավ կերպարանքով:

Ծննդկանին ու նորածնին չար ոգիներից պաշտպանելու համար համատարած բնույթ էր կրում ծննդկանի բարձի տակ Նարեկի, Ավետարանների, Կիպրիանոսի, ինչպես նաև նշխարքի կամ հացի և տարբեր հմայիլների, ծննդկանի մոտ և նրա սենյակում չարահալած հատկանիշ ունեցող տարատեսակ իրերի (խաչերկաթ, շղթա, պարան, բանալի, պողպատե մատանի, սանդերք, ճրագ, խոզի մազ, հրացան, սոխ, սխտոր, աղ, մոխիր, ածուխ) և սուր ծակող ու կտրող մետաղյա առարկաների (դանակ, դաշույն, շամփուր, ակիշ, ասեղ, մկրատ, քորոց և այլն) առկայությունը:

Ըստ ժողովրդական զրույցների՝ ալերից պաշտպանվելու միջոց էր համարվում նաև այն ընտանիքների անդամների կամ նրանց տներից տարատեսակ իրերի ներկայությունը ծննդաբերության ժամանակ, որոնք, իբր թե, ալ են բռնել և բաց թողել, փոխարենը ստացել երդում՝ այլևս իրենց տանը չմոտենալու պայմանով:

Ալն իր գործառութային նշանակությամբ օժտված է չարքերին բնորոշ բոլոր հատկություններով: Ժողովրդական զրույցներում հանդես է գալիս որպես անձնավորված ոգի, ունի արտաքինի հստակ նկարագրություն (օձե մազեր, հրեղեն աչքեր, պղնձե մագիլներ, երկաթե ատամներ, վարազի ժանիքներ և այլն), սեռ (ալը բացառապես իգական սեռի է և հանդես է գալիս տարբեր տարիքի կա-

նանց՝ աղջկա, դեռատի հարսի, բազմազավակ մոր կերպարներով: Միայն ժողովրդական աղոթքներում է, որ ալը հանդիպում է տղամարդու կերպարով՝ «այր մի», կամ իբրև երեխա՝ իր մոր հետ) և զբաղմունք (ծննդկանի թոքի կամ լյարդի գողությունը, կնոջ արգանդում սաղմի ոչնչացումը, նորածնին փոխելը ալի վտիտ, նիհար ու տգեղ դիվուկի հետ) և այլն:

Ալը՝ որպես ծննդկանին ու նորածնին վնասող ոգի, իր չարագործությունները կատարում է ծննդյան պահից սկսած և վտանգ է ներկայացնում վերջիններիս համար՝ մինչև երեխայի քառասունքը լրանալը: Ալերից պաշտպանվելու միջոցներից էր չարահալած հատկանիշ ունեցող իրերի առկայությունը ծննդի պահին և հետծննդյան քառասնօրյա շրջանում, որի կիրառությունն ու օգտագործումն ուղեկցվում էր որոշակի ծիսական գործողություններով:

3.2. ԹՊՂԱՆ ՈՐՊԵՍ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՎ

Հայ ստորին առասպելաբանության մեջ ծննդկանին և նորածնին վնասող չար ոգիների խմբին է պատկանում նաև «թպղա» կոչվող դևը: Այս ոգու ներգործությունը դիտվում էր որպես հիվանդություն՝ թպղոտություն անվամբ: Ժամանակակից բժշկության մեջ այս երևույթը կապում է վեներական ախտերի հետ: Թպղան՝ իբրև ծննդկանին վնասող ոգի կամ ծննդկանին ու նորածնին պատուհասող հիվանդություն, տարածված է Հայաստանի բազմաթիվ ազգագրական շրջաններում՝ Կարինում (թբղ), Մուշ-Բուլանըխում (թբբղ), Ատափազարում (թպղա), Կեսարիայի որոշ հայախոս գյուղերում (Մունճուսուն), Մարզվանում (թպղի), Երզնկայում (թբպղ), Ակնում, Աղձնիքում, Սասունում, Քղիում, Շիրակում, Ջավախքում և այլուր:

Ի տարբերություն ալի, որն իր չարագործությունները կատարում է ծննդաբերության պահից սկսած, թպղան իր չար դիտավորություններն սկսում է աղջկա «ազապության» և մանավանդ հարսնության օրերից և շարունակում մինչև երեխայի երեք կամ յոթ (որոշ դեպքերում՝ մինչև քսան) տարին լրանալը: Ժողովուրդը երևակայում է, որ թպղան գորտանման մի չար ոգի է, որ հղի կանանց արգանդը մտնելով՝ թունավորում է նրանց սաղմը, ինչի պատճառով երեխան կա՛մ մեռած է ծնվում, կա՛մ չափազանց սակավակյաց է լինում: Այս չար ոգին «թպլը» է կոչվում, իսկ նրանից զարնված կինը՝ թպղոտ: Թպղան, նորածին զավակների արյունն ապականելով, մեռցնում է նրանց և գրեթե ամլության դատապարտում մայրերին: Չբերությունը չար ոգիների, մասնավորապես՝ թպղայի ներգործության արդյունք էր համարվում:

Ծննդկան կնոջ և նորածին երեխայի թշնամի համարվող չար ոգի թպղայի հավատալիքն ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է Հայաստանի ազգագրական բազմաթիվ շրջաններում: Հայ ժողովրդական զրույցներում չկա թպղայի՝ իբրև անձնավորված ոգու նկարագրությունը: Այն հանդես է գալիս իբրև հիվանդության հարուցիչ՝ տարատեսակ միջատների (գորտանման ճիճու, կարմիր պոլոճ, քառասուն ոտք ունեցող բոլոճ, խեցգետնանման բազմոտանի և այլն) ու մանր կենդանիների (գորտի կամ գորտանման կենդանու) կերպարանքով:

Ժողովուրդն ունեցել է ծննդկանին ու նորածնին վնասող չար ոգիների դեմ պայքարելու բազմաթիվ միջոցներ ու եղանակներ: Թպղայի պարագայում կայծակի խորհրդանիշ համարվող մետաղների և զանազան իրերի ու առարկաների կիրառումից բացի՝ օգտագործում էին բուժման ծիսահմայական միջոցներ և կենդա-

նական հմայիլներ: Պայքարի միջոցներից մեկն էլ նրանց «խաբելն» է կամ մոլորության ու շփոթության մեջ գցելը: Ժողովուրդը փորձում էր շեղել նրանց ուշադրությունը ծնունդկանին Մարիամ, իսկ նորածնին այլակրոնի անուն տալով, երեխային ոչխարի մսի հետ կշռելու և վերջինս թաղելու, ուրիշ կնոջ կրծքով կերակրելու միջոցով և այլն:

3.3. ՕՐՈՐՈՑԱԳՈՂՆ ՈՒ ՄԱՆԿԱՍԱՍՏ ՈԳԻՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայկական զրույցներում և հավատալիքներում նորածիններին ու մանկահասակ երեխաներին առնչվող չար ոգիների խումբը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնախմբերի՝ երեխաներին կենսական վնաս հասցնող ոգիներ և մանկասաստ ոգիներ: Ատենախոսության մեջ քննվող ոգիներից յուրաքանչյուրն ունի աշխարհագրորեն նեղ ընդգրկում, ինչը բնորոշ չէ ստորին առասպելաբանական մյուս կերպարներին: Այս խմբի հիմնական ոգու՝ օրորոցագողի հավատալիքը տարածված է միայն Լոռիում, Տավուշում, Արցախում և Զանգեզուրում: Տավուշում հայտնի է օրորոցի գող, օրորոցագող կամ մանկանց գող անվանումներով:

Ժողովրդի պատկերացմամբ՝ օրորոցագողը մի չար ոգի է, որ գիշերով, ծնողների քնած ժամանակ օրորոցից գողանում է երեխային, տեղը մի դև դնում կամ օրորոցում խեղդում: Դևերի այս տեսակից երեխաներին զերծ պահելու համար օրորոցի մեջ նշխարք, հմայիլ, խոզի մազ են դնում, բարձին ասեղ ամրացնում, քահանա են կանչում, որ աղոթի ու խաչակնքի երեխային ու նրա օրորոցը: Չնայած ձեռնարկած բոլոր միջոցներին՝ չարքերը, այնուամենայնիվ, կարողանում էին վնասել նորածնին՝ գողանալով ու սպանելով նրան:

Օրորոցագողի հավատալիքը միտված է նորածին երեխային իր օրորոցում և սենյակում միայնակ չթողնելուն ու պայմանավորված է առաջին քառասնօրյակի հետ կապված վախով: Ժողովուրդը կարևորում է երեխայի հետծննդյան քառասնօրյակը և ծիսահմայական գործողությունների ու արգելքների միջոցով փորձում պահպանել նրա կյանքը՝ անվնաս դուրս հանելով քառասունքից: Հայկական զրույցներում ու հավատալիքներում նմանօրինակ գործողություններից է օրորոցագողին փայտաշեն տիկնիկով (Արցախ, Զանգեզուր) կամ մարդակերպ խրտվիլակներով (Երզնկա, Մաղնիսա) խաբելու կամ մոլորեցնելու սովորույթը:

Տավուշում և Լոռիում օրորոցագողի գործառույթով է հանդես գալիս նաև **տուր, սև տուր** կոչվող ոգին: Ըստ հավատալիքի՝ տուր ոգին մանկանը տանում է գիշերը երազի միջոցով: Տուրին է վերագրվում երեխայի հանկարծամահությունը:

Ալաշկերտցիների հավատալիքներում **տուրի** գործառույթը կատարում են **զարկս,** բայազետցիների մոտ՝ **ջաջ,** Մարզվանում՝ **ծագ** կոչվող ոգիները:

Մանկասաստ ոգիները երեխաներին կենսական վնաս չեն հասցնում: Սրանք հորինված են մայրերի կողմից՝ իրենց երեխաներին սաստելու համար: Շիրակում ասում են՝ «խելոք մնա, թե չէ **մեշոկ պապը** գուկա, քեզի կտանի, սապոն կդարձնե», կամ՝ **բոբոլն (արջաբոբոլ)** էկավ, ձենդ կտրե: Տավուշում **(**նաև Արցախում**)** երեխաներին վախեցնում էին **բուղդուլավաշ** կամ **բըղդըլավաշ,** Սիվրիհիսարում՝ **ուվա,** Երզնկայում, Մաղնիսայում (Մանիսա)՝ **խօխ** կամ **խօխօն** ոգիներով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՏՈՄԱՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈԳԻՆԵՐ

4.1. ՇՎՈՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդական զրույցներում ամենատարածված կերպարներից է **շվոտը**: Տարբեր ազգագավառներում ստացել է **շվոտ** (Արարատ, Շիրակ, Խոյ, Պոլիս, Սեբաստիա, Կարին, Խարբերդ, Դերսիմ, Հաճն, Մուշ, Վան, Բագրևանդ), **շիվոտ, շուվեդ** (Մալաթիա), **շհոդ** (Նոր Բայազետ), **շուէտ** (Բալու), **սվեդի** (Շիրակ), **շիֆոտ, ֆշոտ** (Սեբաստիա), **ժվետ, ժվոտ, ժիվոտ** (Նոր Նախիջևան), **իշվուտ** (Մուսա լեռ, Քեսաբ) անունները: Շվոտը փետրվար ամիսն է, փոխառված է պարսկերեն šubāt բառից, որը ասորերեն šəbāt բառից է, «ասորաբաբելական տոմարի 11-րդ ամիսը: Լեզվաբանները (Հ. Աճառյան, Ս. Մալխասյանց) «շուոտ» բառը կապում են փետրվարի ասորական և եբրայական անվանումների հետ: Ժողովրդական պատկերացումներից մեկի համաձայն՝ շվոտներն անտեսանելի ոգիներ են, որոնք սերում են Նոյ նահապետի Քամ որդուց: Շվոտը նախ և առաջ տոմարային ոգի է և կապված է ձմեռ-գարուն անցման հետ: Սրանց պետք է անդրադառնալ Տըրնդեզը դիտարկելիս, քանի որ Շուոտ է կոչվել ոչ միայն փետրվար ամիսն առհասարակ, այլև՝ Տեառնընդառաջ տոնը:

Տեառնընդառաջի գիշերը որոշ բարբառներում կոչվում է «շվոդի գիշեր», իսկ փետրվարը՝ «շվոտի ամիս»: Կարծիք կա, որ շվոտներն առնչություն ունեն սեռական կյանքի հետ: Գարնանը՝ մարտ ամսին, երբ սկսվում է կատուների սեռական կյանքը, և նրանք մլավում են կտուրներին, սովորաբար ասում են «շվոտի ամիս», իսկ սիրահար աղջիկն ու տղան փոխաբերական իմաստով կոչվում են «շվոտի կատու»: Ըստ այս պատկերացումների, ինչպես երևում է, շվոտը կապվում է բեղմնավորության, վերածննդի, սերնդի շարունակության հետ:

Շվոտի մյուս կարևորագույն գործառույթներն են տնային տնտեսության համար վնասատու լինելը, մարդու ամբարած պաշարները սպառելը: Այս պատճառով էլ շվոտներին տնից դուրս էին հանում ծիսական հատուկ գործողությամբ, որը կոչվում էր «շվոտահան»: Փետրվարի վերջին օրը, որոշ վայրերում նաև՝ մարտի մեկին, տան տիկինները փայտով, տարբեր կտորներով, հորթի գեղմով, այծի, ոչխարի մորթիներով խփում են տան պատերին, տան անկյուններին և ասում. «Շվոտը՝ դուրս, մարտը՝ ներս», այսինքն՝ չարը՝ դուրս, բարին՝ ներս»: Ժողովուրդը վերոնշյալ ծեսով ձմեռն է դուրս հանել՝ ի դեմս շվոտի, և արդեն չար ուժերից ազատված՝ փորձել է դիմավորել գարունը:

Շվոտին համապատասխանում են **փուռդիք** կամ **պուպուշիկ** ոգիները: Նրանք պատկերացվում էին իբրև թխամորթ, գանգրահեր, հաստապռոշ, փայլուն աչքերով, գզգզված հանդերձներով մանուկներ, որոնք տներից դուրս էին վռնդվում շվոտահանության ծեսով:

Շվոտը հայտնի էր նաև որպես կենդանիներին վնասող ոգի: Ասում են, որ փետրվարին ծնված ուլերը չէին ապրում, քանի որ շվոտները տկարացնում էին նրանց կամ փոխում, ինչի համար էլ մետաղյա բոժոժներ էին կախում ուլերի պարանոցից: Գոմում ապրող կենդանիներից սիրում են կռվարար ցուլերին, անծին

մատակներին և ապրում են նրանց շուրջը, ականջների և մինչև անգամ մազերի մեջ: Ձիերի կծելը, աքացի տալը վերագրվում էր շվոտների ներկայությանն ու միջամտությանը: Շվոտները մտնում էին ախոռ, հեծնում ձիերին, վազացնում, քրտնացնում, հյուսում նրանց բաշի և պոչի մազերը: Ժողովրդական զրույցներում շատ տարածված է չարքերի կողմից ձիու մազերը հյուսելու մոտիվը: Մարդիկ, ձիու վրա կուպր քսելով, բռնում էին շվոտ, սատանա և ասեղի կամ քորոցի միջոցով զրկում նրանց աներևույթ լինելու կարողությունից:

«**Շվոտ**» անվան տակ կարելի է խմբավորել ժողովրդական զրույցներից մեզ հայտնի չար ոգիներից հետևյալները՝ **շահապետ, շվազ, ժիվոտ, իշվուտ, սվեդի, ազար, փուռդիք, պուպուշիկ**, որոնք գրեթե նույնացվում են վերոնշյալ ոգու հետ: Շվոտի հավատալիքը բնորոշ է միայն հայ ժողովրդի հավատալիքային համակարգին և հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում առկա ժողովրդական զրույցներում:

4.2. ԽԼՎԼԻԿԻ ՀԱՎԱՏԱԼԻՔԸ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայ ժողովրդական զրույցներում և հավատալիքներում համեմատաբար քիչ հանդիպող ստորին առասպելաբանական կերպարներից է **խլվլիկը**, որը կապվում է Նավասարդի տոնի հետ: Պարսկահայքի Խոյ և Սալմաստ գավառներում հինսնօրյա պահքի ուրբաթ գիշերը բոլորի տներում ճոխ ընթրիք էր մատուցվում: Ընթրիքի ընթացքում գալիս էր անկոչ հյուրը՝ խլվլիկը, որը հարևան երեխաների (8-12 տարեկան) խումբ էր: Խլվլիկն ուրբաթ գիշեր սկսում էր հացատների կտուրներով ման գալ և բնամթերք հավաքել:

Խլվլիկը, երեխաների վերոնշյալ խմբի անվանում լինելուց առաջ, ստորին առասպելաբանության մեջ առանձնանում է իր երկակի դրսևորմամբ՝ որպես չար սատանա և արտերի բարի ոգի:

Վերջինիս հավատալիքն ու պատկերացումները տարածված էին պատմական Հայաստանի Պարսկահայք (Խոյ, Սալմաստ) և Վասպուրական նահանգներում: Պարսկահայքում խլվլիկը բրդոտ գլխարկով սատանա էր պատկերացվում, որը բարեկամի կերպարանքով գալիս, խաբում էր մարդկանց և իր հետ տանելով՝ ժայռից ցած էր գլորում:

Ի տարբերություն պարսկահայերի, որոնց շրջանում խլվլիկը չար ոգի է, Վան-Վասպուրականի և Հարք-Բուլանըխի ժողովրդական պատկերացումներում խլվլիկը արդյունաբերող ոգի է համարվում և արտերի մեջ է բնակվում: Հարք-Բուլանըխում խլվլիկը խիպիլիկ էր կոչվում: Աշնանը՝ արտերը հնձելու ժամանակ, խիպիլիկը մտնում էր բարդված խրձերի տակ, և օրանը որքան կրում-տանում էին, չէր սպառվում: Խլվլիկ-խիպիլիկը ժողովրդի կողմից ընկալվում էր որպես հացահատիկի, բերքի հովանավոր: Ըստ հայ ժողովրդական զրույցների և հավատալիքների՝ խլվլիկ-խիպիլիկ կոչվող ոգին մի բրդոտ գլխարկ (քոլոզ) ունի: Եթե մարդուն հաջողվի խիպիլիկի բրդոտ գլխարկը կրել, ապա անտեսանելի կդառնա:

Խլվլիկի հավատալիքը աշխարհագրական առումով լայն ընդգրկում չունի, տարածված է եղել միայն պատմական Հայաստանի Վան-Վասպուրական, Մուշ-Բուլանըխ, Պարսկահայք, Սյունիք նահանգներում: Քննվող ոգու մասին զրույց-

ներն իրենց արտացոլումն են գտել հայկական հեքիաթներում, բանաձևային բանահյուսության, նաև գեղարվեստական գրականության մեջ:

Խլվլիկն իր երկհակադիր դրսևորումներով հանդես է գալիս Վան-Վասպուրականում, միայն աշնանը՝ բերքահավաքի ժամանակ, որպես արտերում բնակվող բարի ոգի արտերին արգասավորություն, բերքին՝ առատություն, իսկ մարդկանց՝ հարստություն պարգևելու գործառույթներով:

Խլվլիկի՝ արտերի ոգու հավատալիքին մասամբ զուգադրվում են արտախլեսի (արտախլիս) հավատալիքն ու համանուն ծեսը: Արտախլեսը՝ որպես արտերի ոգի, ներկայացվում է Ապարանից գրառած ընդամենը մեկ զրույցում: Որպես ծես՝ այն մեծ ընդգրկում է ունեցել Վան-Վասպուրական, Շիրակ և այլ ազգագրական շրջաններում: Շիրակում այն կենցաղավարել է մինչև XX դարի վերջին տասնամյակները:

4.3. ԽԻՊԻԼԻԿԸ՝ ՈՐՊԵՍ ՄՂԶԱՎԱՆՋԻ ԴԵՎ

Խիպիլիկը (խիփիլիկ, խպլիկ) ժողովրդական զրույցներում հանդես է գալիս նաև որպես մղձավանջի ոգի, տարփոգի և հիվանդություն: Ազգագրական որոշ շրջաններում խիպիլիկը կոչվում է նաև գաբոսա, գաբուս (Բուլանըխ), գապուս (Կարին) կամ քաբուս, նաև՝ ղառաղուռա, ղարա-ղուրա, գարա-գուրա (Կեսարիա), գոդոս (Չարսանճագ) և այլն:

Ժողովրդական մեկնաբանմամբ՝ չար ոգի համարվող խիպիլիկը մղձավանջերազն է, որն առաջանում է երկար ժամանակ մեջքի վրա պառկելու հետևանքով: Բուլանըխում խիպիլիկ ասելով՝ հասկանում էին գաբուսը կամ մղձավանջը, որ քնի մեջ մարդկանց կուրծքը ճնշում և շնչահեղձություն էր պատճառում: Խիպիլիկի հավատալիքը՝ որպես քնած մարդկանց մարմինը վնասող չարքի կամ մղձավանջի ոգու, տարածված է հիմնականում Համշենում, Մուշ-Բուլանըխում, Ակնում, սեբաստահայերի և պարսկահայերի շրջանում:

Ժողովրդական պատկերացումներում խպլիկները կարճահասակ, անհամաչափ անդամներով, սրածայր գդակներով ոգիներ են, թշնամի են նյարդային կանանց, որոնց չարչարում են իրենց խեղկատակություններով, տանջանքներով և այլն:

Կարինում խիպիլիկ-գապուսները համարվում էին սատանաների հատուկ պետ, ունեին երեք աչք, որոնցից մեկն էլ՝ ճակատին: Ապրում էին գետնահարկ, մութ տեղերում, գիշերները դուրս էին գալիս և վնասում մարդկանց: Գաբուսի հիմնական գործառույթներից էին մարդկանց քնած ժամանակ խեղդելը կամ չարչարելը, լեզուն բռնելը, որ խոսել, ձայն հանել չկարողանան: Հիվանդների հետևից քայլում էին, հետևում, որ հենց պառկեն, շնչարգելության ենթարկեն վերջիններիս: Մ. Աբեղյանն այս երևույթն անվանում է գիշերախաբություն կամ սատանախաբություն:

Քննվող ոգու «**գաբուս**» անվանումը անմիջականորեն կապված է նրա հիմնական գործառույթի՝ մարդկանց վրա ծնկելու, ընկնելու կամ կռանալու՝ գաբելու (Բուլանըխ), գպելու (Շիրակ) հետ, որի արդյունքում իրենց հաղթանդամ մարմնով ծանրանալով մարդու վրա՝ վնասում, խեղդում, մղձավանջի մեջ են գցում վերջինիս:

Ժողովրդական զրույցներում խիպիլիկ-գաբոս-ղարա-ղուրա ոգիները նկարագրվում կամ ներկայացվում են հիմնականում երկու առարկաների ուղեկցությամբ, որոնք ամբողջացնում են ոգու գործառութային որոշ առանձնահատկություններ: Դրանցից **առաջինը** խիպիլիկի բրդոտ գլխարկն է, որն ապահովում է տիրոջ անտեսանելիությունը: Եթե որևէ մեկին հաջողվեր խլել գլխարկը, ինքն էր դառնում անտեսանելի: **Երկրորդ** առարկան աղոթհամրիչն է (թզբեհ): Գաբոսի հարձակմանը ենթարկված անձը (կին կամ տղամարդ) պետք է խլեր ոգու զորությունն իր մեջ ամփոփած գործիքը՝ թզբեհը, և անցկացներ անդրաշխարհը խորհրդանշող կժի բերանին՝ փակելով վերջինիս վերադարձի ճանապարհը դեպի իր բնակարան՝ անդրաշխարհ: Գաբոսը զրկվում էր իր զորությունից, դառնում մարդակերպ և ծառայության կամ գերության մնում մարդու մոտ: Զրկվելով գլխարկից ու թզբեհից՝ չար ոգի գաբոսը համարվում էր խափանված:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՋՐԻ ՈԳԻՆԵՐ ԵՎ ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐ

5.1. ՋՐԻ ՈԳԻՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ըստ ժողովրդական զրույցների և հավատալիքների՝ **փերիները, հավերժահարսները, ջրանույշները, հրեղեն աղջիկները, ջրի աղջիկները, երկնքի աղջիկները, փերի ղզիները, հնարքներն ու ջրի պառավները** ջրերի ու անտառների ոգիներ են և հիմնականում հանդես են գալիս **փերիներ** ընդհանուր անվան տակ: **Ջրի ոգիներ** անվանումը պայմանական է, քանի որ ջրերի և անտառների ոգիները հաճախ միախառնվում են, նաև լեռների ոգիների հետ են առնչվում: Այս մասին են վկայում **փերի** բառին հոմանիշ **լեռնակույս, լեռնանույշ** բառերը: Որպես ոգիների բնակության վայրեր՝ ժողովրդական զրույցներում ջրերի ու աղբյուրների կողքին հիշատակվում են կանաչ անտառները, հովիտներն ու մարգագետինները, նաև լեռներն ու հին ջրաղացները: Այսինքն՝ քննվող ոգիների խումբը երկկենցաղ է, և ուսումնասիրվող զրույցները փաստում են այս հանգամանքը:

Ժողովրդական զրույցներում ջրի ոգիների արտաքինի մասին պատկերացումներն ու նկարագրությունները երկիակադիր դրսևորումներ ունեն: Ինչպես իրանական, սլավոնական և այլ ժողովուրդների հավատալիքներում, այնպես էլ՝ ջրի ոգիների մասին հայկական **առաջին խմբի** զրույցներում փերիներն ու ջրի աղջիկները պատկերացվում են աստվածային գեղեցկությամբ: Փերիներին նկարագրելիս ժողովուրդը հատուկ ուշադրությամբ ընդգծում է վերջիններիս գեղեցկությունն ամբողջացնող երկու կարևորագույն հատկանիշ՝ կապույտ աչքերն ու շեկ կամ կարմիր մազերը:

Ջրի ոգիների մասին զրույցների **երկրորդ խմբում** գործ ունենք իրենց գեղեցկությունից զրկված փերիների հետ: Չար բնավորության պատճառով, օրինակ, հնարքները կորցնում են իրենց կուսական գեղեցկությունը և հանդես են գալիս իբրև ջրի պառավ կամ չար ոգիներին նմանվող էակներ: Շիրակյան զրույցներում ջրի ոգիները՝ հոթոթներն ու ճոճի պառավները, առավելապես տգեղ ու կեղտոտ արտաքին ունեն:

Երկու խումբ ջրի ոգիներն ունեն գործառութային միևնույն նշանակությունը: Իգական սեռին պատկանող այս ոգիները սիրահոժար կամ բռնի ճանապարհով

սիրային կապի մեջ են մտնում տղամարդկանց հետ՝ իրենց ցեղը բազմացնելու նպատակով: Ի տարբերություն կնոջ ու սատանայի սեռական կապի, որը հիմնականում լինում է «անհետևանք», հաճախ փերիների և տղամարդկանց կապերն ավարտվում են որդեծնությամբ: Առաջին խմբին պատկանող ոգիները՝ հուրի փերիները կամ հավերժահարսերը, ժողովրդական ընկալումներում, ապրում են ուրախ ու թեթևաբարո կյանքով: Իրենց գեղեցկությամբ հրապուրում են տղամարդկանց, տանում իրենց «եղնաղի» մեջ, քաշում ջրի տակ: Ընտրյալների հետ փերի ղզիներն ապրում են ստորջրյա ապարանքներում և վայելում իրենց անտակ հարստությունը: Տուն վերադառնալ ցանկացող տղամարդկանց կաշառում են ոսկով, արծաթով ու ակնեղենով, թողնում են գնալ՝ վերադառնալու և իրենց մասին չբարձրաձայնելու պայմանով: Խոստումը դրժողները պատժվում են՝ զրկվում են ապրուստից, հիվանդանում են, սկսում են հյուծվել և, ի վերջո, մահանում:

Ի տարբերություն փերիների ու հավերժահարսերի՝ ոգիների մյուս խումբն ունի չարության ավելի ընդգծված հատկանիշներ: Ապրելով բացառապես տղմոտ ջրերում՝ թաքնվում են կամուրջների տակ, և երբ որևէ մեկը մութ ժամանակ դրանց վրայով քայլում է, նրան (մանավանդ երեխաներին)՝ քաշում են ջրի մեջ և խեղդում:

5.2.ԳՈՌՆԱՓՇՏԻԿԻ ՀԱՎԱՏԱԼԻՔԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայ ժողովրդական հավատալիքներում և ժողովրդական զրույցներում բարի և չար ոգիների հետ մեկտեղ հանդիպում ենք նաև ուրվականների մասին պատմող բազմաթիվ զրույցների:

Մեռելների հոգիների կերպարանափոխված արարածներին ժողովուրդն անվանում է գոռնափշտիկ (Շիրակ, Արարատ, Բաղեշ, Սասուն), խորդլախ (Մալաթիա) կամ խորթլաղ (Արցախ, Նոր Նախիջևան, Համշեն, Գանձակ, Պապեն, Մարզվան), գոռնադաբ (Վան, Բալու) կամ գոռնաթափ (Կարին), ղառաղուռա (Ծալկա): Գոռնափշտիկները մահացած այլադավանների, ինքնասպանների, չարագործների հոգիներն են, որոնք հանդես են գալիս մարդակերպ և կենդանակերպ:

Ժողովրդական պատկերացումների համաձայն՝ թաղված մեռելների հոգիները հաճախ դուրս են գալիս գերեզմաններից և որպես ուրվականներ՝ շան, կատվի, գառնուկի, գայլի, արջի, այծի, ուլի, ավանակի, աղվեսի, գորտի, նորածին երեխայի կերպարանք ընդունած՝ կանգնում են մարդկանց առաջ, վախեցնում նրանց: Այդ հոգիները կարող են երևալ ոչ միայն իբրև ուրվականներ, այլև հայտնվում են գերեզմանների վրա՝ լույսի ցոլքերի, բոցերի, կրակների տեսքով:

Գոռնափշտիկ են դառնում թուրքի մեռելները, ինքնասպան եղած մարդիկ, չարագործները, չապաշխարած մեղավորները, չկնքվածները, ոչ պատշաճ ձևով հուղարկավորված հանգուցյալները, այսինքն՝ քրիստոնեական համապատասխան ծիսակարգերից և սկզբունքներից շեղված հանգուցյալները, որոնք գերեզմանից մերկ ու այլանդակ կերպարանքով դուրս են գալիս՝ պատանքը ուսները գցած, շրջում են այս ու այն կողմ: Դրանց թափառելուն վերջ տալու միակ միջոցն է հայ քրիստոնյայի ձեռքով գլուխն անջատելն ու նորից թաղելը: Երբեմն էլ լրիվ մերկ մարդկանց կերպարանքով ցատկում են անցորդների մեջքին կամ նստում ձիավորների գավակին: Այս ուրվականների վախից մարդիկ հիվանդանում են: Ըստ շիրակցիների՝ մարդու վնաս չեն տալիս, իսկ Մալաթիայում կարծում էին, որ բռնած հային խեղդում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտությունը բերում է հետևյալ հիմնական եզրահանգումների՝

- Ստորին առասպելաբանությունը բազմագործառույթ համակարգ է, որը համակողմանիորեն ուսումնասիրում է չար ու բարի ոգիների մասին հավատալիքներն ու պատկերացումները: «Ստորին առասպելաբանություն» եզրույթն իմաստաբանորեն իր մեջ է ներառում ստորին առասպելաբանական կերպարների մասին պատմող զրույցներն ու պատմությունները, կերպարների գործառութային համակարգի ուսումնասիրությունը, վերջինների ներգործությունից պաշտպանվելու և ազատվելու միջոցների ու եղանակների քննությունը և այլն:
- Ժողովրդական զրույցների համատեքստում քննվող **դևը դեմոն** է և օժտված է չար ոգիներին բնորոշ բոլոր հատկանիշներով: «Դևը» ստորին առասպելաբանական համակարգի մեջ մտնող չար կերպարներին տրվող ընդհանուր անվանում է, որն իրականացնում է չարի մարմնավորում ընկալվող սատանայի գործառույթները: Չնայած բառի հնագույն ծագմանը՝ դևի մասին պատկերացումներն ու հավատալիքներն աղերսվում են աստվածաշնչյան քրիստոնեական նյութին: Դևերի կարևորագույն գործառույթներից մեկը հիվանդության հարուցիչ լինելն է:
- Կրոնաառասպելաբանական պատկերացումներում սատանան Աստծո և նրա բոլոր հետևորդների հակառակորդն է երկնքում և երկրի վրա, դժոխքի տիրակալն է ու բոլոր անմաքուր ուժերի առաջնորդը: Աստվածաշնչյան սատանայից մինչև կենցաղային սատանան՝ իր բոլոր դրսևորումներով, խոսում է կերպարի՝ առավել լայն շրջանակներում ընդգրկված լինելու մասին (առասպել, հեքիաթ, զրույց, անեկդոտ, հանելուկ, առած, ասացվածք, գրական երկ և այլն): Ժողովրդական զրույցներում սատանան հանդես է գալիս երկակի բնույթով՝ բնավորության ու գործառույթների կտրուկ փոփոխություններով:
- Ծննդկանին ու նորածնին վնասող և մարդկության բազմացմանը խոչընդոտող ոգիներից ալը օժտված է չարքերին բնորոշ բոլոր հատկություններով: Իր չարագործությունները սկսում է կնոջ ծննդաբերության կամ երեխայի ծննդյան պահից և վտանգ է ներկայացնում վերջիններիս համար՝ մինչև երեխայի քառասունքը լրանալը: Ժողովրդական զրույցներում ալը հանդես է գալիս որպես անձնավորված ոգի՝ սեռի, տարիքի, արտաքինի ու գործառույթի հստակ նկարագրությամբ: Ալի հավատալիքն ունի հնագույն ակունքներ և տարածված է նաև քրիստոնյա և մահմեդական շատ ժողովուրդների հավատալիքներում:
- Ծննդկանին և նորածնին վնասող չար ոգիներից թպղան իր չարագործությունները կատարում է աղջկա ազապության և հարսնության օրերից, շարունակում մինչև երեխայի երեք կամ յոթ (որոշ դեպքերում՝ մինչև քսան) տարին լրանալը: Ժողովրդական զրույցներում այն հանդես է գալիս իբրև հիվանդության հարուցիչ և պատկերացվում տարատեսակ միջատների ու մանր կենդանիների կերպարանքով: Թպղայի հավատալիքն ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է Հայաստանի ազգագրական շատ շրջաններում:

- Նորածին մանկան գողի՝ օրորոցագողի հավատալիքը բնորոշ է Հայաստանի ազգագրական չորս շրջաններին (Լոռի, Տավուշ, Արցախ, Սյունիք)՝ կենցաղավարելով ցայսօր: Հայաստանի մյուս ազգագավառներում օրորոցագողի գործառույթն իրականացնում են տուր, ջաջ, ծագ, քավթառ քոսի, ուվա, խոխ և այլ չար ոգիներ: Օրորոցագողը և մանկասաստ ոգիներից յուրաքանչյուրն ունեն աշխարհագրորեն նեղ ընդգրկում, ինչը բնորոշ չէ ստորին առասպելաբանության մյուս կերպարներին:
- Շվոտը տոմարային ոգի է, որը քննվում է Տեառնընդառաջ և մասամբ՝ Ամանոր տոների համատեքստում: Իրենց բնույթով շվոտներն ուտող-սպառող ոգիներ են, և նրանց կարևորագույն գործառույթը տնային տնտեսության համար վնասատու լինելն է: Շվոտահանության ծեսով ժողովուրդն ազատվել է չար ոգիներից (ձմռանից) և արդեն չար ուժերից ազատված՝ դիմավորել է գարունը: Շվոտի հավատալիքը բնորոշ է միայն հայ ժողովրդի հավատալիքային համակարգին և հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր պատմազգագրական շրջաններում առկա ժողովրդական զրույցներում:
- Խլվլիկ-խիպիլիկ ոգու մասին զրույցներն ու հավատալիքները քննվում են աշուն-ձմեռ անցման և նախկինում ժողովրդի մեջ կենցաղավարած նավասարդյան տոնակատարությունների համատեքստում: Խլվլիկի հավատալիքը չունի լայն ընդգրկում՝ աշխարհագրական առումով, տարածված է եղել միայն պատմական Հայաստանի Վան-Վասպուրական, Մուշ-Բուլանըխ, Պարսկահայք, Սյունիք նահանգներում: Խլվլիկն իր երկիակադիր դրսևորումներով հանդես է գալիս Վան-Վասպուրականում բերքահավաքի ժամանակ՝ որպես արտերում բնակվող բարի ոգի՝ արտերին արգասավորություն, բերքին՝ առատություն, իսկ մարդկանց՝ հարստություն պարգևելու գործառույթներով: Որպես չար ոգի՝ դրսևորվում է Պարսկահայքի Խոյ և Սալմաստ գավառների ժողովրդական հավատալիքներում՝ մարդկանցից վրեժխնդիր լինելու, խաբելու, խեղդելու ու սպանելու գործառույթներով:
- Խիպիլիկը ժողովրդական զրույցներում հանդես է գալիս նաև այլ գործառույթներով՝ որպես մղձավանջի ոգի, տարփոգի և հիվանդություն: Որոշ ազգագրական շրջաններում այն կոչվում է նաև գաբուս, որի հիմնական գործառույթն է մարդկանց քնած ժամանակ խեղդելը կամ չարչարելը: Ժողովրդական զրույցներում խիպիլիկ-գաբոսը հանդես է գալիս ուղեկցող երկու հիմնական առարկաներով (խիպիլիկի քոլոզ, գաբոսի աղոթամրիչ), որոնք ամբողջացնում են վերջինիս գործառութային առանձնահատկությունները:
- Ջրի ոգիներն իրենց բնույթով երկկենցաղ են, ապրում են թե՛ ջրում և թե՛ ցամաքում: Զրույցներում ջրի ոգիները ներկայացվում են երկիակադիր դրսևորմամբ՝ որպես չնաշխարհիկ գեղեցկության տեր փերի և տգեղ ու անճոռնի ջրի պառավ: Գեղեցիկ արտաքինով ոգիները՝ փերիներն ու հավերժահարսերը, տարփոգիներ են: Հանդես են գալիս տղամարդկանց գայթակղելու, խաբելու հատկանիշներով: Իսկ տգեղ ու անճոռնի ջրի պառավները զրույցներում դրսևորվում են մարդկանց ու երեխաներին կենսական վնաս հասցնելու գործառույթով:

- Քրիստոնեական համապատասխան ծիսակարգերի չարժանացած հանգուցյալների հոգիները կերպարանափոխվում են և դառնում ուրվականներ, որոնց ժողովուրդն անվանում է գոռնափշտիկ, խորթլախ կամ գոռնադաբ: Գոռնափշտիկ դառնում են անգութ և բռնակալ մահմեդականները, որոնք գերեզմանից մերկ ու այլանդակ կերպարանքով դուրս են գալիս և թափառում այս ու այն կողմ: Մարդկանց կենսական վնաս չեն հասցնում:
- Հայ ստորին առասպելաբանական կերպարները, որքան էլ որ տարբեր են միմյանցից, ունեն բազմաթիվ նմանություններ ու ընդհանրություններ: Բոլոր կերպարներին հատուկ են կերպարանափոխման, փոխակերպման և աներևույթ դառնալու կարողությունները: Գրեթե նույնն են կանխարգելիչ գործողություններն ու պաշտպանական միջոցները՝ աղոթք, խաչակնքում, սուրբ գրքերի, հմայիլների, սուր, կտրող, ծակող մետաղյա իրերի կիրառություն և այլն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ատենախոսության հավելվածը բաղկացած է հինգ մասից:

1. **Զրույցներ չար ոգիների մասին (դաշտային բանահյուսական նյութեր)**, որտեղ ներկայացվում են ատենախոսի՝ չար ոգիների մասին 2008-2021 թթ. գրառած զրույցներից (11 միավոր):
2. **Բանահյուսական տեքստեր** (ժողովրդական աղոթքներ, խաղիկներ, անեծքներ (կշտամբանք), առած-ասացվածքներ, դարձվածքներ, երդումներ), որոնք վերցվել են բանահյուսական և ազգագրական տարբեր ժողովածուներից:
3. **Չար ոգիների անունների բառարան** (բարբառային տարբերակներ, գործառույթներ, արտաքին տեսքի նկարագրություններ), **ոգիների հատուկ անունների ցանկ**, **չար ոգիների հարուցած հիվանդությունների ցանկ**: Բառարանում ատենախոսը մեկտեղել և դասակարգված ներկայացրել է գրավոր և բանավոր աղբյուրներում առկա զրույցներից ու ազգագրական նյութերից վերցված չար ոգիների անուններ՝ տալով վերջիններիս անունների բարբառային տարբերակները՝ բացատրելով տվյալ բարբառով կամ խոսվածքով: Առանձին ներկայացվում են հատուկ անուններ ունեցող չար ոգիները և այն հիվանդությունների ցանկը, որոնք, ըստ ժողովրդական պատկերացումների, մարդկանց մոտ առաջանում են չար ոգիների ներգործության հետևանքով:
4. Չար ոգիների տեղաբաշխվածության քարտեզ՝ կից աղյուսակով:
5. Նկարների ցանկ:

Հետազոտության բովանդակությունն արտացոլված է ատենախոսի հրատարակած հետևյալ հոդվածներում՝

1. Սատանան հայ ժողովրդական սնահավատական զրույցներում. ՀՀԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, հ. XIV, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2011, էջ 92-105:
2. Ուրվական-գոռնափշտիկների հավատալիքը և պատկերացումները. Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2012, № 3, էջ 162-168:
3. Թպղան հայ ժողովրդական հավատալիքներում և սնահավատական զրույցներում. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, հ. XIX, Գյումրի, 2016, էջ 177-185:
4. Շվոտը հայ ժողովրդական սնահավատական զրույցներում. Լրաբեր հասարակական գիտությունների, № 3 (651), Երևան, 2017, էջ 263-279:
5. Ալը հայ ժողովրդական սնահավատական զրույցներում. Բանբեր Երևանի համալսարանի, հայագիտություն, № 1(22), Երևան, 2017, էջ 42-53:
6. Դևը հայ ժողովրդական սնահավատական զրույցներում, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2019, էջ 180-188:
7. Դիվահարություն և դիվահալածություն. հիվանդություն և բուժում (ըստ ժողովրդական զրույցների և միջնադարյան ձեռագրերի). ՀՀ ԳԱԱ, ՇՀՀԿ, Գիտական աշխատություններ, № 2(23), Գյումրի, 2020, էջ 184-194:
8. Օրորոցագող և մանկասաստ ոգիներ (ըստ ժողովրդական զրույցների), Հասկեր մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, Երևան, 2018-2019, (տպագրվել է 2020-ին), էջ 20-30:

ГАЛСТЯН АСМИК ГЕНРИКОВНА

ЗЛЫЕ ДУХИ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗАНИЯХ. КЛАССИФИКАЦИЯ ВИДОВ ПО ИХ ФУНКЦИЯМ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.05 - «Фольклористика»

Защита кандидатской диссертации состоится 17-ого декабря, 2021 г. в 14:00 в Институте литературы им. М.Абегяна НАН РА на заседании ученого совета ВАК по литературе 003. Адрес: г. Ереван, ул. Гр. Лусаворича, 15

Диссертация посвящена исследованию персонажей низшей мифологии, существующих в армянских народных сказаниях, проблеме их группировки и классификации. Предмет исследования посвящен армянским сказаниям только о злых духах, посему как материал о них довольно объемен, и в рамках одной работы невозможно представить всех духов, относящихся к двум основным группам (злых и добрых). Персонажи низшей мифологии рассматриваются с синхронным подходом, основываясь на материале устного народного творчества и этнографии второй половины 19-ого века по наше время.

При изучении вопросов, связанных с возникновением персонажей, этимологией их имен и др. иногда становилось необходимым обращаться к историческим источникам (асинхронный подход), что носило эпизодический характер и не относилось к нашей основной цели.

Цель данной диссертации – группировка и классификация персонажей низшей мифологии, существующих в армянских народных сказаниях согласно их типам и функциям. Для достижения нашей цели необходимо решить следующие вопросы:

а. Собрать воедино, систематизировать народные сказания о низших мифологических персонажах – основываясь как на письменные источники, так и на устное народное творчество;

б. Сгруппировать вариации известных нам имен духов и имен, используемых в диалектах по принципу идентификации;

в. Описать и определить место персонажей низшей мифологии в армянском пандемонеуме;

г. Произвести этимологический анализ с целью решить вопрос о происхождении и появлении имен духов;

д. Проследить распространение и понять географический охват духов и веры в них;

е. Исследовать существующих в армянских народных сказаниях персонажей низшей мифологии в контексте религиозной и повседневной жизни народа;

ж. Провести сравнительный анализ функций злых духов с другими персонажами низшей мифологии сказаний и верований других народов.

Анализ персонажей низшей мифологии, являющихся основным предметом исследования, производился в совокупности с проблемами возникновения и развития, применяя исторический подход - историко-познавательный и сравнительно-исторический анализ.

Общая методологическая основа работы – эмпирический метод исследования, который производился при помощи наблюдений, записи материала, сравнения и сопоставления материалов устного народного творчества и этнографии. Местные представления и проявления верований, присущих отдельным этнографическим районам в контексте целостности, произведены индуктивным методом. При выполнении работы применялись типологический и феноменологический методы.

Работа состоит из введения, пяти глав, заключения, списка источников и использованной литературы, а также приложения.

В **первой главе** *«Жанровые и структурные особенности народных преданий о злых духах»* обсуждаются следующие вопросы:

1. Жанр народных сказаний и наименования;
2. Научная терминология;
3. Основы классификации персонажей низшей мифологии.

Низшая мифология - это многофункциональная система, которая разносторонне исследует верования и представления о злых и добрых духах. Понятие «низшая мифология» семантически включает в себя сказания и рассказы, повествующие о демонах и духах, изучение системы функций персонажей, анализ способов и методов защиты и избавления от их дурного влияния и пр.

Во **второй главе** *«Дэв и демоническое в армянском народном фольклоре»* анализируются вопросы этимологии слов «дэв», «сатана», их происхождение, количество функциональных проявлений, место их проживания, пол, возраст, описание их внешности и ритуалов, связанных с демонической одержимостью и экзорцизма.

Третья глава *«Духи, препятствующие продолжению рода человека, причиняющие вред роженице и новорожденному»* посвящена злым духам, связанным с материнством - периодами до родов и после, их функциональным проявлениям (ап и тпха), а также духам, причиняющим угрозу для жизни детей и пугающих их.

В **четвертой главе** *«Духи, связанные со временем»* обсуждаются вариации имен духов времени – швот, хлвлик и хилилик, их значения и функциональные проявления. Дух хилилик рассматривается как дух кошмаров.

Пятая глава *«Духи воды и призраки»* посвящена водным духам – пери, водяным старухам, а также нечисти – горнапштику, их анализу, изучению их возникновения, функциям и вопросам методов противостояния им.

В **Заключении** изложены основные результаты проделанной работы и *сделанные выводы*.

В **Приложении** представлены беседы о персонажах низшей мифологии, записанные автором во время полевых работ, тексты различных фольклорных жанров, фотографии, карта распространения духов с относящейся к ней таблицей. В приложении также представлен словарь имен злых духов с их диалектными вариациями, с описаниями основных функций и внешнего вида, а также списки особых имен духов и перечень болезней, насылаемых злыми духами.

HASMIK H. GALSTYAN

THE EVIL SPIRITS IN ARMENIAN FOLK STORIES. CLASSIFICATION ACCORDING TO THEIR FUNCTIONS

Abstract of the dissertation to receive a scientific degree of the PhD in philology in 10.01.05 "Folklore".

Defence of the thesis will be held on December 17, 2021 at 14:00 at the session of the SCC 003 special commission for the speciality of "Literary Studies" at the M. Abeghyan Institute of Literature of the National Academy of Sciences of Armenia at the following address: Yerevan, Grigor Lusavorich 15.

The present thesis is devoted to the studies of characters of the lower mythology, which exists in the Armenian folk stories, and to the problem of their classification and grouping.

The research subject is devoted only to the Armenian folk stories about evil spirits, as the material is quite rich, and within the framework of this thesis, it is impossible to present all the spirits belonging to both groups (kind and evil spirits). The characters of the lower mythology are considered with synchronous approach based on folklore and ethnographic material from the second half of the 19th century to the present time.

When studying problems related to the origins of characters, the etymology of their names, etc., sometimes we found it necessary to refer to historical sources (asynchronous approach). These cases are episodic and do not refer to our main goal. The purpose of the thesis is to group and classify the characters of lower mythology

that exist in Armenian folk tales, according to their types and functions. In order to achieve our goal, it was necessary to solve the following issues:

a. To collect and to systematize folk tales about lower mythological characters based on both written sources and folklore;
b. To group variations of the names of spirits known to us and names used in dialects, according to the principle of identification;
c. To describe and to define the place of the characters of the lower mythology in the Armenian pandemonium;
d. To carry out an etymological study in order to solve the problem of the origins and appearance of the names of spirits;
e. To find out the distribution and geographical coverage of spirits' "existence" and beliefs in them;
f. To explore the characters of lower mythology existing in Armenian folk tales in the context of the religious and everyday life of the people;
g. To conduct a comparative analysis of the functions of evil spirits with the characters of the lower mythology from folk stories and beliefs of other peoples.

The analysis of the characters of lower mythology, which are the main subject of research, was carried out in conjunction with the problems of origin and development, using a historical approach: historical-cognitive and comparative-historical analysis. The general methodological basis of the work is an empirical research method, which was carried out using observations, recording material, comparing and contrasting folklore and ethnographic materials. Local representations and manifestations of beliefs inherent in particular ethnographic areas in the context of integrity are produced by an inductive method.

When performing the work, typological and phenomenological methods were used. The work consists of the Introduction, five chapters, conclusion, lists of sources and used literature, and an appendix.

In the **First chapter**, *"Genre and Structural Features of Folk Stories about Evil Spirits"* the following issues are discussed:

1. The folktale genre and names;
2. Scientific terminology;
3. Basics of classification of characters of lower mythology.

Lower mythology is a multifunctional system that comprehensively explores beliefs and ideas about good and evil spirits. The concept of "lower mythology" semantically includes legends and stories telling about the spirits and demons, the study of

the system of functions of the characters, the analysis of ways and methods of protection and getting rid of their bad influence, etc.

The **Second chapter** *"Devs and the demonic in Armenian folklore"* analyzes the etymology of the words "dev", "satan", their origins, the number of functional expressions, their habitat, gender, age, description of their appearance and rituals associated with demonic possession and exorcism.

The **Third chapter**, *"Spirits that prevent human reproduction, harm women in labor and newborns"* is devoted to the spirits referring to maternity stages (before giving birth and after), their functional expressions ("al" and "tpkha") and the spirits endangering children's life and scaring them.

The **Fourth chapter** *"Spirits Associated with Time"* discusses the variations of the names of the spirits of time – "shvot", "khlvlik" and "khipilik", their meanings and functional expressions. "Khipilik" the evil spirit is considered as a spirit of nightmares.

The **Fifth chapter** *"Spirits of water and ghosts"* is devoted to water spirits – "peri", water old women, as well as evil spirits – "gornapshtik", their analysis, and the study of their origins, functions and problems of methods of confronting them.

The **Conclusion** contains the main results of the performed work and the conclusions.

The **Appendix** contains conversations about characters of lower mythology recorded by the author during fieldwork, texts of various folklore genres, photographs, and a map of the spread of spirits with a table related to it. The appendix also contains a dictionary of the names of evil spirits with their dialect variations, with descriptions of their main functions and appearance, as well as lists of special names of spirits and a list of diseases sent by evil spirits.